

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՓԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ



*ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆԸ:*

*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿՏԵՄԲԵՐԻ
23-Ի*

ԹԻՎ 29-Ն ՈՐՈՇՄԱՍԲ:

ԳՅՈՒՂ ՋՐԱՓԻ - 2016 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՓԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՀՆԳԱՄՅԱ ՁԱՐԳԱՑՄԱՆ



ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆԸ:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
23-Ի

ԹԻՎ 29-Ն ՈՐՈՇՄԱՄԲ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
- 1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
- 1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
- 1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
- 1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
- 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ
- 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ
- 1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- 1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
- 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- 1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
- 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
- 2.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.4. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.5. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ` ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ
4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի 2016-2020 թվականների զարգացման ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է հնգամյա ժամկետում համայնքի համալիր զարգացմանն ուղղված ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ:

Հնգամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի վերլուծության, առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և բյուջետավորման նպատակային գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն կարող է հաշվի առնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության և սահմանամերձ բնակավայրերի զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել են համայնքի ֆինանսական, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները, իրականացվելիք ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումները, ինչպես նաև կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են սոցիլ-տնտեսական իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում կախված արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

ՋՐԱՓԻ ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ



1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ջրափի գյուղը հիմնվել է 1828-1830 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո: Նախկինում ունեցել է Չըռփլի, Չորթուլի, Ջրափի, Քյորփիլու, Կեկաչ, Դեղաձ անվանումները:

Բնակավայրը Ջրափի է վերանվանվել 1947 թվականին:

Բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բուլանրդի, Մուշի, Էրզրումի շրջաններից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 209, 1897 թ-ին՝ 976, 1926 թ-ին՝ 587, 1939 թ-ին՝ 935, 1959 թ-ին՝ 485, 1989 թ-ին՝ 1075 հայ բնակիչ:

Ախուրյանի ջրամբարի կառուցման պատճառով Ներքին և Վերին Ջրափի գյուղերը տեղահանվել են և 1974-77 թվականներին ապաբնակեցվել են Ջրափի նորակառույց ավան:

Գյուղի շրջակայքում կա Սուրբ Սարգիս և Սուրբ Գրիգոր եկեղեցիները:

Ջրափի գյուղը նախկինում բաժանված է եղել երկու մասի: Ներքին Ջրափին՝ նախկին Չրփլին, հիշատակվում է դեռևս 10-11-րդ դարերում: Բնակավայրի տարածքում մինչև ջրամբարի կառուցումը պահպանվել էին միջնադարյան քարավանատունը եւ կամրջի մնացորդները, կառուցված՝ Անի մայրաքաղաքի ծաղկման առաջին կամ երկրորդ ժամանակաշրջանում: Քարավանատունը պատկանում է եռանավ դահլիճ տիպին, իսկ եռաթռիչք կամուրջն իրենց չափերով միջնադարյան Հայաստանում ամենախոշորն էր:



Ախուրյանի ջրամբարի կառուցման պատճառով քարավանատունը և Վերին Ջրափիի 19-րդ դարի կառույց եկեղեցին տեղափոխվել և վերականգնվել են նոր տեղում, իսկ կամրջի ավերակները մնացել են ջրի տակ: Երբ ջրամբարի ջրի մակարդակը բավականաչափ իջնում է, ջրի տակից տեսանելի են դառնում կամրջի մնացորդներ: Սակայն դա հազվադեպ է պատահում, այն էլ երաշտ տարիներին, երբ Արարատյան դաշտավայրի համար ջրթողի քանակը գերազանցում է նախատեսված նորման և ջրամբարում ջրի քանակը չի գերազանցում 15 մլն խորանարդ մետրը:

Մինչև 1947 թվականը գյուղում սահման հասկացությունը չի եղել: Ջրափիի և հարևան թուրքական Քինակ գյուղի սահմանը եղել է Ախուրյան գետը: Գետի լայնքը հազիվ 4-5 մետր է եղել ու այնքան ծանծաղ, որ երբ ցամաքել է, հնարավոր է եղել ոտքով հանգիստ անցուդարձ անել: Հայրենական պատերազմից հետո Թուրքիայի սահմանը ամրացվել է, ամբողջ երկայնքով կառուցվել են փշալարային փակոցներ և գյուղի ելքն ու մուտքը մինչև նոր ավանի կառուցումը կատարվել են անցագրային ռեժիմով:

Ջրափի գյուղը գտնվում է Արագած լեռան արևմտյան մասում Ախուրյանի ջրամբարի հարևանությամբ, նախկին բնակավայրից 2 կմ արևելք: Հողային տարածքով սահմանակից է հարավային մասով Շիրակի մարզի Աղինի հողատարածքներին, հյուսիսային մասով Շիրակի մարզի Սարակապի, իսկ արևելյան մասով Հայկաձորի հողատարածքներին, արևմտյան մասով սահմանակից է Թուրքիային, որից սահմանահատվում է Ախուրյանի ջրամբարով:

Գյուղը ՀՀ կառավարության որոշման համաձայն ընդգրկված է հանրապետության սահմանամերձ բնակավայրերի ցանկում,

Ջրափի գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1520 մ բարձրության վրա: Մարզկենտրոն Գյումրիից հեռավորությունը կազմում է 30 կմ, Մարալիկ քաղաքից՝ 35 կմ, իսկ մայրաքաղաքից 117 կմ:

1915-1920-ական թվականների թուրք հրոսակների արշավանքների հետևանքով Արևելյան Հայաստանի գյուղերի ու քաղաքների մեծ մասը կողոպտվել ու ավերվել են: 1918 թվականին նշված հրոսակախմբերը մեծ ոճրագործություններ են իրականացրել Կարսում, Շիրակում, Լոռի-Փամբակում և Հայաստանի այլ շրջաններում: Այդ ողբերգական, արյունալի էջերից անմասն չի մնացել նաև Վերին և Ներքին Ջրափի գյուղերը: Գյուղը մեծ սիրով ապաստան է տվել թուրքական յաթաղանից փրկված ավելի քան 100 արևմտահայ գաղթական ընտանիքների, որոնց սերունդներից շատերաը ներկայումս բնակվում են գյուղում:

1887 թվականից Ջրափին գտնվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921 թվականին բնակավայրում հաստատվել են խորհրդային կարգեր և մինչև 1996 թվականը ընդգրկված է եղել Անիի շրջանի կազմում: 1996 թվականին, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային վերջին բաժանումից հետո, Ջրափին, որպես վարչական առանձին միավոր՝ ինքնուրույն համայնք, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կազմում:

Բնակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում անասնապահությունը, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են թռչնաբուծությամբ, մեղվապահությամբ, կարտոֆիլի և բանջարաբոստանային այլ մշակաբույսերի մշակությամբ:

Ջրափի գյուղն իր զարգացումն հիմնականում ապրել է նոր ավանի կառուցումից հետո: Գյուղում կառուցվել է միջնակարգ դպրոց, սկուլմբ, հիվանդանոց, խանութներ, հանրային սննդի օյեկտ, մանկապարտեզ, կենցաղի տուն, վարչական շենքեր, անասնապահական և գյուղատնտեսական նշանակության տասնյակ շենքեր ու շինություններ: Կայուն տնտեսական աճ է ունեցել Ջրափիի սկզբնական շրջում՝ կոլեկտիվ, ապա խորհրդային տնտեսությունը: Այն աչքի է ընկել հասկապես կաթի և մսի արտադրության բարձր ցուցանիշներով:

1960-ական թվականներից հետո համայնքի աշխատունակ բնակչության հիմնական մասը զբաղվածություն են ունեցել տարածքի տուֆ քարի արտադրության

ձեռնարկությունում, Լենինականի և Մարալիկի շինարարական, արտադրական և գյուղատնտեսության սպասարկման տարբեր կազմակերպություններում: Գյուղում գործում էր նաև «Երագ» ավտոգործարանի մասնաճյուղ, որն ապահովում էր մոտ 30 աշխատատեղ:

Սակայն նշված ձեռնարկությունները ներկայումս հիմնականում չեն գործում և համայնքի աշխատունակ բնակչության հիմնական մասը զբաղված է գյուղացիական տնտեսությամբ ու արտագնա աշխատանքով: Վերջին 20 տարիների ընթացքում արտագնա աշխատանքի բերումով համայնքից արտագաղթել են ավելի քան 20 ընտանիքներ:

Գյուղի վարելահողերի գերակշռող մասը լեռնատափաստանային սևահողեր են, որի ռոռզման, պարարտացման և ագրոտեխնիկական կանոնների ճիշտ կիրառման դեպքում կարող է ապահովվել հացահատիկի և բանջարաբուստանային մշակաբույսերի կայուն և բարձր բերքատվություն: Սակայն ռոռզման համակարգի քայքայվածության, գյուղատնտեսական մեքենաների մաշվածության, դիզելային վառելանյութի, պարարտանյութերի, թունաքիմիկատների գների թանկության, ինչպես նաև հակակարկտային կայանքների բացակայության պայմաններում դաշտավարության և անասնապահության բնագավառում համայնքի գյուղացիական տնտեսությունները ցանկալի արդյունք չեն ստանում:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տվել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Ջրափիի միջնակարգ դպրոցը ունեցել է բարի ավանդույթներ և ուսման բարձր առաջադիմություն:

Յուրանքանչյուր տարի, դպրոցի տասնյակ շրջանավարտներ տեղ են զբաղեցրել հանրապետության հեղինակավոր պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Սակայն բնակչության ներկայիս սոցիալական վատ պայմանների պատճառով, քչերին է հաջողվում իրենց շնորհալի ու տաղանդաշատ երեխաներին բարձրագույն կամ մասնագիտական կրթության տալ:

Համայնքը գիտության, մշակույթի և արվեստի ոլորտներում տվել է տասնյակ նշանավոր մարդիկ:

Ջրափին ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես Հայրենական Մեծ պատերազմին, այնպես էլ Արցախյան ազատամարտին:

Հայրենական Մեծ պատերազմում գյուղը տվել է **123 զոհ**:

Արցախյան ազատամարտի մասնակիցներ են համայնքի 15 կամավորականներ, Արցախի համար մշված մարտերում և սահմանների պաշտպանության ժամանակ գյուղը տվել է 1 զոհ:

Համայնքի բնակիչները կամավոր մասնակցության ունեցան 2016 թվականի ապրիլյան քառորյա պատերազմում:

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ՌԵԼԻԵՖԸ

Ջրափի գյուղը գտնվում է Արագած լեռան արևմտյան մասում Ախուրյանի ջրամբարի հարևանությամբ, նախկին բնակավայրից 2 կմ արևելք: Իր հողային տարածքով սահմանակից է հարավային մասով Շիրակի մարզի Աղինի հողատարածքներին, հյուսիսային մասով Շիրակի մարզի Սարակապի, իսկ արևելյան մասով Հայկաձորի հողատարածքներին, արևմտյան մասով սահմանակից է Թուրքիային, որից սահմանահատվում է Ախուրյանի ջրամբարով:

Համայնքի տարածքում տարեկան տեղումների քանակը կազմում է 350-450 մմ: Ամենացածր ջերմաստիճանը եղել է -35°C , իսկ ամենաբարձրը՝ $+33^{\circ}\text{C}$:

Գյուղն ունի կտրտված ռելիեֆ: Այն ծովի մակերևույթից բարձր է 1520մ: Ամենաբարձր ջերմաստիճանը, որը նկատվում է հուլիսի վերջին տասնօրյակին և օգոստոսի 10-ին կազմում է $+30^{\circ}$ - $+35^{\circ}\text{C}$: Ունի խստաշունչ ձմեռ, ամենացածր ջերմաստիճանը հունվար ամսին կազմում է -30° - -35°C :

Ջերմաստիճանային տատանման ամպլիտուտը կազմում է $+35^{\circ}\text{C}$ -ից -35°C :

Կլիման խիստ ցամաքային է, որպես խմելու ջուր օգտագործում են արտեզյան հորերի ջուրը: Ոռոգելի վարելահողերը կազմում են 180 հա, սակայն ցանցի քայքայվածության պատճառով փաստացի ոռոգվում են ընդամենը 20 հա: Հաշվարկված է, որ 1993 թվականից մինչև այսօր տարեկան մթնոլորտային տեղումների միջինը կազմում է 450մմ 460մմ:

Արձանագրված է եղել, որ ամենացածր տարեկան տեղումները եղել են 1965թվականին՝ 219մմ և 1989 թվականին՝ 195մմ.:

Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը: Հարուստ է տուֆ քարով, հանքակոպիճով, ավազով ու կավով: Բնակավայրի տարածքը հարուստ է արդեզյան ջրերով:

Հողատարածքները մշտապես վտանգված են կարկտահարությամբ և տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2587.69 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 2185.28 հա, այդ թվում 924.66 հա վարելահող, 1130.30հա արոտ և 130.32 հա գյուղատնտեսական այլ հողատեսքեր: Ջրային ֆոնդի հողերը կազմում են 226.12 հա: Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 47.93 հա.:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 30 կմ, մարզկենտրոնից 33 կմ և մայրաքաղաքից՝ 117 կմ հեռավորության վրա: Բնակավայրի հարևանությամբ է անցնում Գյումրի-Արմավիր-Երևան հանրապետական նշանակության ճանապարհը և Գյումրի-Երևան երկաթուղին, Բնակավայրը Աղինի երկաթուղային կայարանից գտնվում 7 կմ հեռավորության վրա:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնի պատմական տեղեկությունների համաձայն գյուղը ձևավորվել է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո:

Բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բուլանըղի, Մուշի, Էրզրումի շրջաններից, իսկ մնացած մասը 1915 թվականի եղեռնի պատճառով ներգաղթել են Ղարսի նահանգի, Մուշ և Տարոն գավառների բնակավայրերից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 209, 1897 թ-ին՝ 976, 1926 թ-ին՝ 587, 1939 թ-ին՝ 935, 1959 թ-ին՝ 485, 1989 թ-ին՝ 1075 հայ բնակիչ,

Ջրափի գյուղը նախկինում բաժանված է եղել երկու մասի՝ Ներքին և Վերին Ջրափի: Ախուրյանի ջրամբարի կառուցման պատճառով գյուղերը տեղահանվել են և 1974-77 թվականներին ապաբնակեցվել է Ջրափի նորակառույց ավան:

Գյուղի բնակչության թվաքանակը հիմնականում աճել է ետեղեռնյան շրջանում: Սակայն ներգաղթած ընտանիքների մեծ մասը հետագայում արտագաղթել են Հայաստանի այլ բնակավայրեր:

Բնակավայրը ամենաշատ բնակչություն ունեցել է նոր ավանի կառուցումից հետո, որտեղ Ախուրյանի ջրամբարի շինարարական աշխատանքներին մասնակցելու բերումով բնակելի տներ են ստացան և բնակություն հաստատել նաև հարևան Սարակապ, Աղին և այլ գյուղերի բնակիչներ:

Ջրափի գյուղը ամենաշատ բնակչություն՝ 1290 բնակիչ ունեցել է 1986 թվականին:

Վերջին 20 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է մոտ 200 մարդով, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 20-30 տոկոսը մեկնում են արտագնա սեզոնային աշխատանքի, շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (մարդ)

(Տվյալները լրացված են 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ)

- Ընդամենը՝ մշտական բնակչություն - 974,
Այդ թվում՝ տղամարդ - 485, կին՝ - 504,
- Տնային տնտեսությունների թվաքանակը – 226,
- Առկա բնակչություն – 1031,
- Առկա տնային տնտեսությունների քանակը – 208,

Բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելության (առկա բնակչություն)

- Հայ – 1011,
- Ռուս – 2,
- Եզդի – 13.

Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի (առկա բնակչություն)

- Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 6 տարեկան / - 67,
որից՝ մինչև 1 տարեկան – 20,
1-2 տարեկան – 19,
3-4 տարեկան – 13,
5-6 տարեկան – 15:
- Դպրոցական տարիքի երեխաներ / 7 – 17տարեկան / - 98,
որից՝ 7-10 տարեկան – 39,

11-14 տարեկան – 36,

15-17 տարեկան – 23:

Հասուն տարիքի բնակչություն / 18-64 / - 757,

որից՝ 18-22 տարեկան – 49,

23-45 տարեկան – 136,

46-64 տարեկան – 541:

Տարեց բնակչություն / 65 և ավելի / - 75:

Համայնքի ընտրողների թիվը - 666:

Ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն (վերջին 3 տարիների միջին ցուցանիշ)

Ծնունդ - 12,

Որից կենդանի ծնունդ – 12,

Մահ – 10,

Ամուսնություն – 5,

Ամուսնալուծություն – 0:

Համայնքի սոցիալական խմբերի ներկայացվածությունը

Հաշմանդամներ – 29,

այդ թվում կանայք՝ 14,

որից՝ հաշմանդամ երեխա – 2,

Միակողմանի ծնողազուրկ երեխա - 4,

Ամուսնալուծված անձի երեխա – 0,

Կենսաթոշակառուներ – 143,

Միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ – 1,

Տարեց կենսաթոշակառուներ /75 տարեկան և բարձր/ - 11,

Համայնքի տնային տնտեսությունների սոցիալական խմբերի ներկայացվածությունը

Երեք և ավելի երեխաներ ունեցող /0-16 տարեկան/ – 35,

Միայն կենսաթոշակառուներից կազմված /65 և ավելի տարեկան/ - 1,

Հաշմանդամ երեխա ունեցող – 2,

Մինչև 6 տարեկան երեխա ունեցող – 59,

Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 25:

Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի (մարդ)

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 667,
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 32,
- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում, մասնավոր – 45,
- Վարձու աշխատանք պետական ոլորտում – 52,
- Ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 0,
- Աշակերտներ /16 տարեկան և բարձր/ - 7,
- Ուսանողներ – 45,
- Բանակում ծառայողներ – 21,
որից պայմանագրային՝ 18,
պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող՝ 8,
- Չունեն զբաղվածություն /տնտեսապես ոչ ակտիվ/ – 105,

Համայնքում զբաղվածների բաշխվածությունն ըստ ոլորտների

- Գյուղատնտեսություն – 667,
- Հանքագործական արդյունաբերություն – 10,
- Էլեկտրոէներգիայի, գազի ջրամատակարարման ոլորտի սպասարկում – 3,
- Շինարարություն – 30,
- Առևտուր և այլ սպասարկումներ – 3եր – 32,
- Տրանսպորտ և կապ – 4,
- Տեղական ինքնակառավարում – 9,
- Կրթություն – 25,
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ – 3,
- Կոմունալ, անհատական ծառայությունների մատուցում – 1,
- Ոսանողներ, ավարտական դացարների աշակերտներ, բանակում ծառայողներ - 97:

Միգրացիա /2016 թվականի ընթացքում/

- Այլ բնակավայր տեղափոխված ընտանիքների թիվը – 10,
որից՝ Հայաստանում այլ բնակավայր՝ 6:

- Արտերկիր՝ 0:
- Մշտական բնակության համար համայնք տեղափոխված ընտանիքների թիվը՝ 0,
- որից Հայաստանի այլ բնակավայրերից՝ 0:
- Արտագնա աշխատանքի մեկնողների թիվ – (25 տնային տնտեսություններից)45:

Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի

- Տարրական – 15,
- հիմնական – 128,
- միջնակարգ -659,
- միջնակարգ մասնագիտական – 89,
- բարձրագույն - 97:

1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և հանայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի /ավագանու 5 անդամ/ և համայնքի ղեկավար: 2016 թ. Հոկտեմբերի 2-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով համայնքի ղեկավար է վերընտրվել Կամո Սարգսյանը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

Հայեդողական պաշտոն

Համայնքի ղեկավարի տեղակալ:

Համայնքային ծառայության պաշտոններ՝

1. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր,
2. գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ – 1 միավոր,
3. գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ – 1 միավոր,
4. գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ – 1 միավոր:

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ

1. Համակարգչի օպերատոր – 1 միավոր,
2. Գրադարանավար – 1 միավոր,

3. Ծառայողական ավտոմեքենայի վարորդ – 1 միավոր,
4. Ջրհան կայանի փականագործ– 1 միավոր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անուն, ազանուն	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցական պատկանելությունը
1.	Անդրանիկ Սարգսյան	1956	Միջ.մասնագիտական	ՀՀԿ
2.	Արման Պետրոսյան	1986	Բարձրագույն	ՀՀԿ
3.	Արթուր Տնտյան	1976	Միջ.մասնագիտական	ՀՅԴ
4.	Ֆիրդուս Պետրոսյան	1964	Միջ.մասնագիտական	անկուսակցական
5.	Կարապետ Հակոբյան	1968	Բարձրագույն	անկուսակցական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՓԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎԵՐԸ

N	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնյին դրույքաչափը	Ազգանուն, անուն	Ծննդյան թիվը	Կրթությունը
<i>Քաղաքական պաշտոն</i>						
1.	Համայնքի ղեկավար	1	200 000	Սարգսյան Կամո	1959թ.	Միջ. մասնագիտական
<i>Հայեցողական պաշտոն</i>						
1.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	120000	Բալասանյան Պարգև	1961 թ.	Միջ. մասնագիտական
<i>Համայնքային ծառայության պաշտոններ</i>						
1.	Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	124000	Միքայել Կարապետյան	1956 թ.	Բարձրագույն
2.	Առաջատար մասնագետ-հաշվապահ /3.1-1/	1	122000	Աիդա Խաչատրյան	1969 թ.	Բարձրագույն
3.	Առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	120000	Պետրոսյան Հռիփսիկ	1960թ.	Միջ. մասնագիտական

<i>Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ</i>						
1.	Համակարգչի օպերատոր	1	96000	Գագիկ Պետրոսյան	1987 թ.	Միջ. մասն
2.	Գրադարանավար	1	110000	Անահիտ Սարգսյան	թ.	Միջ. մասն
3.	Վարորդ	1	110000	Էդգար Սարգսյան	թ.	Բարձրագույն
4.	Ջրհան կայանի փականագործ	1	93000	Աննա Յուզբաշյան	թ.	Միջնակարգ
<i>Աշխատակազմի աշխատակիցների քանակը</i>		9 (ինը)				

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել և գործում են հետևյալ մշտական հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով,
- Անչափահասների հարցերի հանձնաժողով,
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով,
- Կանանց և երեխաների հարցերի հանձնաժողով,
- արտակարգ իրավիճակներից հետո ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով,

1.5. ՀԱՄԱՅՄՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի <<Համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին>> թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սեփականություն հանդիսացող բոլոր շենքերն ու շինությունները կառուցվել են 1974-1979 թվականներին, նոր ավանի կառացման ժամանակ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անբարեկարգ վիճակում է մանկապարտեզի, փոստի բաժանմունքի, հիվանդանոցի,

մշակույթի տան փոստի բաժանմունքի շենքերը, մարզադաշտը, որոնք կառուցման օրվանից մինչև օրս հիմնանորոգման չեն ենթարկվել:

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1979 թվականի: Այն ունի 4.5 կմ երկարություն: Ջրամատակարարումն իրականացվում է 8 լիտր/վրկ հզորության խորքային մեկ պոմպի և 240 ու 400 տոննա տարողության օրական կարգավորման ջրամբարների միջոցով: Ցանցի քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծերի վթարները, ջրի կորուստներն ու աղտոտումները: Վերանորոգման կարիք ունի պոմպակայանն ու օրական կարգավորման ջրամբարները:

Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1980-ական թվականներին և ունի 96.2 կմ ընդհանուր երկարություն: Այն նախատեսված է եղել 180հա վարելահողերի ոռոգման համար: Ցանցի քայքայվածության պատճառով դաշտերի ոռոգում չի իրականացվում և գործում է միայն գյուղամիջյան տնամերձ հողամասերի մոտ 45 հա ոռոգման ցանցը: Ցանցի վերանորոգման դեպքում կարող է ոռոգվել 180 հա վարելահող:

Բնակավայրի կոյուղու համակարգն ունի 3.5 կմ ընդհանուր երկարություն, որը նույնպես գտնվում է քայքայված վիճակում և ունի վերանորոգման կարիք:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են նաև ինչպես մայրուղի բնակավայր 0.8 կմ, ճանապարհը, այնպես էլ շուրջ 8 կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 20 կմ, որի առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել է անանցանելի և լուրջ դժվարություններ է ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով և ներգրավված միջոցներով պարբերաբար կատարվել են բնակավայր մտնող և ներհամայնքային ճանապարհների փոսալցման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Համեմատաբար բարվոք վիճակում է մշակույթի տան շենքում գյուղապետարանի կողմից օգտագործվող 3 աշխատասենյակները, որոնք 2010-11 թթ վերանորոգվել է համայնքի բյուջեի միջոցներով: Նորացման և համայրման կարիք ունի գյուղապետարանի և մշակույթի տան գույքը:

Բուժ. մանկաբարձական կետը 2005 թվականին մասնակիորեն նորոգվել է ԱՄՆ դեսպանության <<ՆՈՎԱ>> ծրագրի և համայնքի կողմից կատարված ներդրումների միջոցով:

<<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> շրջանականերում 2010 թվականին շահագործման է հանձնվել բնակավայրի գազաֆիկացման համակարգը: Սակայն համապատասխան ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով համայնքի ոչ բոլոր տնտեսություններ են կարողացել միանալ գազատարին: Սպառիչ ցանցերի բացակայության պատճառով բնական գազից օգտվում են համայնքի տնտեսությունների միայն 30 տոկոսը:

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՓԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ

N	Գույքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը / դրամ/	Հաշվեկշռային ընդհանուր արժեքը /դրամ/	Գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը
1.	Մշակույթի տան շենք	հատ	1	Գնահատված չէ	0.0	Վերանորոգման կարիք ունի
2.	Փոստի բաժանմունքի շենք	հատ	1	Գնահատված չէ	0.0	Վերանորոգման կարիք ունի
3.	Հիվանդանոցի շենք	հատ	1	Գնահատված չէ	0.0	Չի օգտագործվում, վերանորոգման կարիք ունի
4.	Բնակելի շենք	հատ	46	Գնահատված չէ	0.0	Վերանորոգման կարիք ունի
5.	Մանկապարտեզի շենք	հատ	1	Գնահատված չէ	0.0	Ենթակա է հիմնանորոգման
6.	Խմելու ջրի օրական կարգավորման ջրամբար	հատ	2	Գնահատված չէ	0.0	Ենթակա է վերանորոգման
7.	Զրամատակարարման ներքի ցանց	կմ	4.5	Գնահատված չէ	0.0	Ենթակա է վերանորոգման
8.	Խմելու ջրի խորքային հոր	հատ	2	Գնահատված չէ	0.0	Օգտագործվում է
9.	Տրանսֆորմատորային ենթակայան	հատ	1	Գնահատված չէ	0.0	Օգտագործվում է
10.	Ներհամայնքային կոյուղագիծ	կմ	3.5	Գնահատված չէ	0.0	Ենթակա է նորոգման
11.	Ոռոգման համակարգ	կմ	92.6	Գնահատված չէ	0.0	Ենթակա է հիմնանորոգման
12.	Ներհամայնքային ճանապարհներ	կմ	8.0	Գնահատված չէ	0.0	Ենթակա է վերանորոգման
13.	Դաշտամիջյան ճանապարհներ	կմ	20.0	Գնահատված չէ	0.0	Ենթակա է վերանորոգման
14.	Ներհամայնքային	հատ	3	Գնահատված չէ	0.0	Առանձին

	կամուրջ			ված չէ		հատվածներ ենթակա են փոսայցման
15.	Մարգարաշտ	հատ	1	Գնահատ- ված չէ	0.0	Ենթակա է կառուցապատման
16.	Գերեզմանոց	հատ	1	Գնահատ- ված չէ	0.0	Բավարար
17.	Երկաթյա պահարան	կազմ	1	Գնահատ- ված չէ	0.0	Բավարար
18.	Գրասեղան	հատ	5	28000	140000	Բավարար
19.	Սեղան	հատ	3	25000	75000	
20.	Աթոռ	հատ	10	10000	40000	Բավարար
21.	Աթոռ	հատ	2	17000	34000	Բավարար
22.	Պահարան	հատ	1	Գնահատ- ված չէ	0.0	Մաշված է
23.	Նավթամթերքի մետաղյա տարրա	հատ	8	Գնահատ- ված չէ	0.0	Ենթարկված է կոռոզիայի
24.	Ավտոմեքենա ԳԱԶ3129	հատ	1	2630000	2630000	Ենթակա է վերանորոգման
25.	Ավտոմեքենայի գազաբալոնային սարք	հատ	1	333200	333200	Բավարար
26.	Համակարգիչ Պենտիում-4	հատ	1	188000	188000	Բավարար
27.	Մոնիտոր	հատ	1	105000	105000	Բավարար
28.	Տպիչ	հատ	1	47000	47000	Բավարար
29.	Ստեղնաշար	հատ	1	6000	6000	Բավարար
30.	Մկնիկ	հատ	1	3000	3000	Բավարար
31.	Գազի վառարան	հատ	1	60000	60000	Բավարար
Գրադարանի գույք						
1.	Քարտարկղ	հատ	1	Գնահատ- ված չէ	0.0	Մաշված
2.	Գրասեղան	հատ	1	Գնահատ- ված չէ	0.0	Մաշված
3.	Երկաթյա գրադարակ	հատ	32	Գնահատ- ված չէ	0.0	Բավարար
4.	Ցուցափեղք	հատ	4	Գնահատ- ված չէ	0.0	Բավարար
5.	Գրքի ցուցափողք	հատ	2	Գնահատ- ված չէ	0.0	Բավարար
6.	Գրապահարան	հատ	4	Գնահատ- ված չէ	0.0	Բավարար
7.	Գրականություն	Կտոր	6650	Գնահատ- ված չէ	0.0	Մաշված
Մշակույթի տան գույք						
1.	Սեղան	հատ	1	Գնահատ- ված չէ	0.0	Մաշված

2.	Բիլիարդ փոքր	հատ	1	Գնահատված չէ	0.0	Մաշված
3.	Կախիչ	հատ	1	Գնահատված չէ	0.0	Մաշված
4.	Դահլիճի նստարան	հատ	150	Գնահատված չէ	0.0	Մաշված

1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրը կոյուղացված է: Կեղտաջրերի հեռացման համակարգն ունի 4կմ ընդհանուր երկարության, որը կառուցումից ի վեր վերանորոգման չի ենթարկվել: Ցանցի քայքայվածության պատճառով առանձին տնտեսությունների կողմից կեղտաջրերի հեռացումը կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով:

Բնակավայրում կանոնակարգված աղբահանություն չի իրականացվում: Կենցաղային աղբը համայնքից հեռացվում է տնային տնտեսությունների և գյուղապետարանի կողմից կազմակերպվող սանիտարական մաքրման օրերի միջոցով:

Բնակավայրը չունի համայնքային նշանակության հանգստի գոտի: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի փոշոտվածությունը:

Բնակավայրում վտանգավոր արտանետումներ չկան:

1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում կա 250 բնակելի տներ՝ 32436 քառ.մ ընդհանուր մակերեսով և 6 անհատական առանձնատներ՝ 700 քառ.մ ընդհանուր մակերեսով: Բոլոր բնակելի տները կառուցվել են 1974-1977 թթ. նոր ավանի կառուցման ժամանակ: Բնակելի տներից 210-ը սեփականաշնորհված են և հանդիսանում են համայնքի բնակիչների սեփականությունը, իսկ 40 բնակելի տներ հանդիսանում են համայնքի սեփականություն: Բնակավայրը գտնվում է 1988թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի գոտում: Համայնքի բնակֆոնդի մոտ 50 %-ը ստացել է 3-4 աստիճանի վնասվածություն և նրանց մեծ մասը ենթակա է ուժեղացման ու վերանորոգման:

ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԹՎԻ

N	Սենյակների թիվը	Կառուցման տարեթիվը	Բնակարանների թիվը	Բնակարանների ընդհանուր մակերեսը /քառ.մ/	Սեյսմոկայունությունը
	Ընդամենը բնակարաններ	1974-1977թթ.	250	32436	9
1.	1 սենյականոց բնակարան	-	-	-	-
2.	2 սենյականոց բնակարան	-	-	-	-
3.	3 սենյականոց բնակարան	1974-1977թթ.	125	11500	9
4.	4 սենյականոց բնակարան	1974-1977թթ.	125	20936	9

ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՈՒՆԵՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ

N	Խնդրի նկարագրությունը	Շենքերի քանակը	Բնակչության թվաքանակը
1.	Վթարային շենքեր	-	-
2.	Տանիքի նորոգման խնդիր ունեցող	250	1128
3.	Կոյուղացման և կոյուղու ցանցի վերանորոգման խնդիր ունեցող	250	1128
4.	Ջրամատակարարման խնդիր ունեցող	250	1128
5.	Հիմնանորոգման խնդիր ունեցող	220	980
6.	Ընթացիկ վերանորոգման խնդիր ունեցող	30	148
7.	Շրջակայքի բարեկարգման խնդիր ունեցող	250	1128

1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Բնակավայրի խմելու ջուրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1979 թվականի: Այն ունի 4.5 կմ երկարություն: Ջրամատակարարումն իրականացվում է 8 լիտր/վրկ

հզորության խորքային պոմպի, 240 և 400 տոննա տարողության օրական կարգավորման ջրամբարների միջոցով: Ցանցի քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծերի վթարները, ջրի կորուստներն ու աղտոտումները: 2016 թվականից վերանորոգումից հետո պոմպակայանը և օրական կարգավորման ջրամբարները գործում են նորմալ շուրջօրյա:

Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1980-ական թվականներին և ունի 96.2 կմ ընդհանուր երկարություն, որը նախատեսված է եղել 180 հա վարելահողերի ոռոգման համար: Ցանցի քայքայվածության պատճառով դաշտերի ոռոգում չի իրականացվում և գործում է միայն գյուղամիջյան տնամերձ հողամասերի մոտ 45 հա ոռոգման ցանցը: Ցանցի վերանորոգման դեպքում կարող է ոռոգվել 180 հա վարելահող:

Բնակավայրի հարևանությամբ է գտնվում Ախուրյանի ջրամբարը: Համապատասխան համակարգի կառուցման դեպքում առկա հսկայածավալ ջրային պաշարները կարող են օգտագործվել համայնքի ոռոգման կարիքների համար:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ինչպես մայրուղի բնակավայր 0.8 կմ, այնպես էլ շուրջ 8 կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 20 կմ: Նրա առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով և ներգրավված միջոցներով պարբերաբար կատարվել են բնակավայր մտնող 0.8 կմ և ներհամայնքային ճանապարհների առանձին հատվածների փոսալցման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Բնակավայրում գործում է փոստային բաժանմունք:

Համայնքում առկա է բնակիչների սեփականությունը հանդիսացող 60 մարդատար ավտոմեքենա:

Բնակավայրը ապահովված է <<ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ>>, <<ՕՐԱՆԺ>>, <<ԲԻԼԱՅՆ>> բջջային և <<Արմենտելի>> կողմից սպասարկվող ֆիքսված հեռախոսակապով: Ֆիքսված հեռախոսակապով են ապահովված համայնքի 35 տնտեսություններ:

Բնակավայրն ընդունում է 7 հանրապետական և 2 մարզային հեռուստաալիքներ: Ինտերնետային կապը նորմալ է:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապն ապահովվում է միկրոավտոբուսի 2 երթուղիների միջոցով: Մեկ ուղևորի փոխադրավարձը կազմում է 400 դրամ:

Մայրաքաղաքի և հարևան համայնքների հետ կապն ապահովվում է Գյումրի-Արմավիր-Երևան երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների միջոցով: Ջրափի երկաթուղային կայարանը ապահովվում է համայնքի բնակիչների փոխադրումները՝ քաղաքներ Արմավիր և Երևան, օրեկան 3 անգամ:

1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է:

Բնակչությունը սերտ կապեր ունի մայրաքաղաքի, մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է ինչպես հանրապետությունում գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Համայնքն անդամակցում է «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը, համագործակցության կապեր ունի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագրի, «Հայաստան համահայկական հիմնադրամի», «Սոցիալական ներդրումների հիմնադրամի», «Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի», ՄԱԿ-ի ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի, «Շիրակ հասարակական կազմակերպությունների միություն» ՀԿ-ի, «Շիրակի հասարակական կազմակերպությունների միություն» ՀԿ-ի, ներդրումային այլ կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի Առաջնորդարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2578.69 հա, որից՝

1. գյուղատնտեսակն նշանակության հողեր – 2185.28 հա,

այդ թվում՝

□ վարելահողեր – 924.66 հա,

այդ թվում՝

սեփականաշնորհված – 753.06 հա,

համայնքային սեփականության – 171.60 հա,

□ արոտներ – 1130.30 հա.

□ այլ հողատեսքեր – 130.32 հա:

Վարելահողերի մեկ հեկտարից ստացվող զուտ եկամտի կադաստրային միջին գնահատականը կազմում է 25300 դրամ, իսկ արոտներինը՝ 10700 դրամ:

Սեփականաշնորհված վարելահողերի մեկ հողաժնի չափը կազմում է 2.3 հա.

2. Բնակավայրի հողեր – 47.93 հա.

3. Արդյունաբերական, արտադրական նշանակության հողեր 19.98 հա.

4. Հանքավայրերի հողեր – 3.38 հա

5. Ճանապարհների տակ օգտագործվող հողեր – 35.76 հա.

6. Պատմամշակութային նշանակության հողեր – 21.84 հա.

7. Ջրային ֆոնդի հողեր – 226.12 հա.

8. Հատուկ նշանակության հողեր – 11.55 հա.

1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն են: Ոռոգման ջրի, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն և այլն/ և հակակարկտային կայանքների բացակայության պատճառով համայնքի գյուղացիական տնտեսությունները լուրջ դժվարությունների առաջ են կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու և բարձր բերքատվություն ապահովելու համար:

Համայնքում կազմավորված են 233 գուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 924.66 հա վարելահող և օգտագործվում 1130.30 հա արոտ: Համայնքի տնտեսությունների սեփականությունն է հանդիսանում 753.06 հա վարելահող, իսկ թվով 48 տնտեսությունների կողմից օրենքով սահմանված կարգով վաճակալված է 171.60 հա վարելահող: Համայնքում վարելահող չունեցող տնտեսություններ չկան:

Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, մասամբ կարտոֆիլի, կաղամբի և բանջարաբոստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Գյուղատնտեսական մթերքների

արտադրության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է բնակլիմայական պայմաններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են երաշտով, ցրտահարությամբ և կարկտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 25-30 ցենտներ, իսկ երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կարող է կազմում է 50-100%: Բուսաբուծության զարգացմանը մեծապես խոչընդոտում է ռոռզման համակարգի քայքայվածությունը, լավորակ սերմերի բացակայությունը, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների մաշվածությունն ու պակասը, դիզելային վառելանյութի, պարարտանյութերի և թունաքիմիկատների բարձր գները:

Բուսաբուծության բնագավառում վերջին 10 տարիներին արձանագրվել է հացահատիկի և կարտոֆիլի արտադրության ծավալների նվազում:

Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 865 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 453 գլուխ, ոչխարներ և այծեր՝ 360 գլուխ, խոզեր 420 գլուխ: Առանձին տնտեսություններ զբաղվում են նաև թռչնաբուծությամբ /հավեր՝ 2674 թև/ և մեղվապահությամբ /160 մեղվաընտանիք/:

Անասնապահության բնագավառում վերջին 10 տարիներին համայնքում արձանագրվել է մսի և կաթի արտադրության ծավալների ավելացում:

Գյուղում կա 13 տրակտոր, 3 կոմբայն, 1 խոտհնձիչ, 13 բեռնատար ավտոմեքենա, տասնյակ գյուղատնտեսական գործիքներ ու մեխանիզմներ:

Գյուղտնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա գյուղատնտեսական տեխնիկայի և պահեստամասերի մեծ պահանջարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը

Հողատեսքի անվանումը	2016թվական	
	Քանակը /հա/	Որից օգտագործվում է /հա/
Ընդամենը գյուղտնտեսական նշանակության հողեր, որից՝	2185.28	1667.66
Վարելահող	924.66	767.66
Բազմամյա տնկարկներ	0.0	0.0
Խոտհարքներ	0.0	0.0
Արոտավայրեր	1130.30	900.0
Այլ գյուղատնտեսական հողեր	130.32	0.0

2. Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը

	Ցանկատարածությունների կառուցվածքը	2016 թվական		% -ը վարելահողերի ընդհանուր քանակի նկատմամբ /924.66հա/
		Քանակը /հա/	Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը /բերքատվություն/ տոննա	
1.	Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում՝	481	2.0	52.0
	Ցորեն	280	2.0	30.3
	Գարի	201	2.0	21.7
	Այլ հացահատիկային մշակաբույսեր	0.0	0.0	0.0
2.	Ընդամենը կերային մշակաբույսեր, այդ թվում՝	40.0	3.0	4.3
	Կորնզան	30.0	3.0	3.2
	Առվույտ	10.0	3.0	1.1
3.	Ընդամենը բանջարաբոստանային մշակաբույսեր, այդ թվում՝	24.0	18.0	2.6
	Կարտոֆիլ	20.0	20.0	X
	Կաղամբ	3.0	10.0	X
	Գազար	0.5	2.0	X
	Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	0.5	2.0	X
4.	Այլ /ցեղ/	222.66		24.1
5.	Զմշակվող վարելահողեր	157.0	0.0	17.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	687.08	X	X

3. Հիմնական մշակաբույսերի միջին համախառն բերքը /բերքատվություն/

Մշակաբույսի տեսակը	2016 թվական
Հացահատիկ	
Ցանկատարածքը /հա/	481
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	2.0
Համախառն բերքը/տոննա/	962.0
Կերային մշակաբույսեր	
Ցանկատարածքը	40.0
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	3.0
Համախառն բերքը/տոննա/	120.0
Կարտոֆիլ	

Ցանկատարածքը	20
1 հեկտարի միջին բերքատվությունը/տոննա/	15
Համախառն բերքը/տոննա/	300.0
Կաղամբ	
Ցանկատարածքը	3.0
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	10.0
Համախառն բերքը/տոննա/	300.0
Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	
Ցանկատարածքը	1.0
1 հեկտարի միջին բերքատվությունը/տոննա/	2.0
Համախառն բերքը/տոննա/	2.0

4. Անասնազրկիսաքանակը

Գյուղատնտեսական կենդանիների տեսակները	/գլուխ/ 01.01.2016թ. հաշվառման տվյալներով
Խոշոր եղջերավոր անասուններ	865
որից՝ կովեր	453
ոչխարներ և այծեր	360
Խոզեր	420
թռչուններ	2674
մեղվաբնտանիքներ	160

5. Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	2016 թվական
Մթերատվությունը	
Մեկ պայմանական գլուխ խոշորի մթերատվությունը, տոննա	120
1 կովի կաթնատվությունը /լիտր/	1500
1 ոչխարի բրդատվությունը /կգ/	2.6
1 հավի ձվատվությունը /հատ/	150
1 մեղվաբնտանիքի մթերատվությունը /կգ/	10.0
Արտադրության ծավալները	
Մսի արտադրություն /տոննա/	26.8
Կաթի արտադրություն /տոննա/	680.0
Բրդի արտադրություն /տոննա/	0.9
Չվի արտադրություն /հազ. հատ/	300.0

Մեղրի արտադրություն /տոննա/	1.6
-----------------------------	-----

6. Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ

Գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների անվանումը	Չափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	3
Անվավոր տրակտոր	հատ	8
Հացահատրկային կոմբայն	հատ	3
Խոտհնձիչ կոմբայն	հատ	1
Բեռնատար ավտոմեքենա	հատ	13
Տրակտորային կցասայլ	հատ	8
Գութան	հատ	4
Կուլտիվատոր	հատ	5
Շարքացան	հատ	5
Հակավորող մեքենա	հատ	2
Կերամանրիչ մեքենա	հատ	1

1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ

Համայնքում ներկայումս գործում է քարի մշակման ընդամենը մեկ արտադրամաս:

Մինչև 1990 թվականը համայնքի աշխատունակ բնակչության 15-20 տոկոսը զբաղվածություն են ունեցել Գյումրու, Մարալիկի արտադրական ձեռնարկությունում, շինարարական և գյուղատնտեսության սպասարկման տարբեր կազմակերպություններում, համայնքում գործող <<Երագ>> ավտոգործարանի արտադրամասում և այլ ձեռնարկություններում:

Անհրաժեշտ ներդրումներ կատարելու դեպքում համայնքում կարող է զարգանալ քարի արտադրության և մշակման, գյուղատնտեսական մթերքների վերամշակման /մսամթերքի արտադրություն, կաթի վերամշակում/ և ձկնարդյունաբերության ճյուղերը:

Համայնքում գործում է առևտրի 4 օբյեկտ, որոնք բավարարում են բնակչության սպառման պահանջները: Գործում է նաև մեկ բենզալիցքավորման կայան և մեկ կերադաց:

Համայնքում հանրային սննդի և կենցաղային սպասարկման օբյեկտներ չեն գործում:

1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 250 աշակերտ/տեղով հանրակրթական մեկ դպրոց, որտեղ ներկայումս սովորում են 102 աշակերտներ:

Դպրոցը կառուցվել է 1976 թվականին նոր ավանի կառուցման ժամանակ:

Դպրոցն ունի 19 մանկավարժ և 6 սպասարկող անձնակազմ, մանկավարժներից 15-ն ունեն բարձրագույն կրթություն, որից 11-ը կանայք են:

Դպրոցի շենքը 2010 թվականներին վերանորոգվել է Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով, իսկ պետական բյուջեի միջոցներով 2011թվականին դպրոցում անցկացվել է ջեռուցման համակարգ: Դպրոցն հիմնականում ապահովված է անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և ուսումնա-մեթոդական նյութերով:

Աշակերտների բաշխումն ըստ դասարանների

N		Աշակերտների թիվը	Դպրոցում ընդգրկված աշակերտների թիվը ըստ տարիքային խմբերի	
1.	Դպրոցահեն նախակրթարան	13	3-6 տարեկան	
			Տղա	Աղջիկ
			8	5
2.	Տարրական կրթ. /1-4-րդ դասարաններ/	38	Մինչև 7 տարեկան և բարձր	
			Տղա	Աղջիկ
			18	20
3.	Միջնակարգ կրթ./5-9-րդ դասարաններ/	39	Տղա	Աղջիկ
			22	17
4.	Հիմնական կրթ. /10-12-րդ դասարաններ/	25	Տղա	Աղջիկ
			15	10
	Ընդամենը	115	63	52

Քայքայված և անբարեկարգ վիճակում է 120 տեղանոց մանկապարտեզի շենքը և այն 1991 թվականից չի գործում:

Վերանորոգման և գույքի նորացման կարիք ունի մշակույթի տունը:

Համայնքը չունի հանգստի գոտի կամ այլ հարմարություններ՝ որտեղ հնարավոր կլինի կազմակերպել համայնքի բնակչության հանգստն ու ազատ ժամանցը, երեխաների մշակութային ու գեղագիտական դաստիարակությունը:

Համայնքն ունի մարզադաշտ, որը վերանորոգման և կառուցապատման կարիք ունի:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է Աղինի, Մարալիկի առողջության կենտրոնների և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցով, որտեղ աշխատում են 2 բուժքույր: Համայնքի բուժ. մանկաբարձական կետը մասնակի նորոգվել է 2005 թվականին Հայաստանում ԱՄՆ դեսպանատան «ՆՈՎԱ» ծրագրի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրումների շնորհիվ:

Համայնքում առկա է համայնքի սեփականություն հանդիսացող տիպային հիվանդանոցի շենք, որն օգտագործվում էր որպես շտապ բուժ. օգնության ծառայություն և սպասարկում էր Անիի նախկին տարածաշրջանի ներքին ենթագոտու համայնքների բնակիչներին: Մակայն այդ ծառայությունը 2008 թվականին փակվել է և նշված շենքը ներկայումս չի օգտագործվում համայնքի կարիքների համար:

1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Բերրի վարելահողերի առկայությունը.
- Ախուրյանի ջրամբարին մետ գտնվելը.
- տուֆ քարի պաշարների առկայությունը.
- Գյումրի-Արմավիր մայրուղուն մոտ գտնվելը.
- Երկաթուղուն մոտ գտնվելը.
- Արտեզյան ջրերի մեծ պաշարների առկայությունը.
- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի, բանվորական աշխատուժի առկայությունը.
- քարի արտադրության և մշակման, գյուղատնտեսական մթերքների վերամշակման և ձկնարդյունաբերության ճյուղերի զարգացման հնարավորությունները:
- Համայնքի բնակչության համախմբվածությունը:

1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ոռոգման համակարգի քայքայվածությունը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները:
- Հակակարկտային կայանքների բացակայությունը:
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդին հասված վնասները:
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները:
- Գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները:

- Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը:
- Գազբաշիչ ցանցի անավարտ վիճակը:
- Մշակույթի տան քայքայված վիճակը:
- Մանկապարտեզի շենքի քայքայված վիճակը:
- Հանգստի գոտու բացակայությունը:
- Մայրուղի բնակավար, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը:
- Գործազրկության բարձր մակարդակը:
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները:

1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ախուրյանի ջրամբարի ջրային մեծ պաշարների բազայի վրա ոռոգման համակարգի կառուցում, դաշտավարության և անասնապահության ճյուղերի զարգացում:
- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի տրամադրման և սուբսիդավորման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացում, վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում:
- Այգեգործության, մեղվապահության և ձկնարդյունաբերության ճյուղերի զարգացում:

1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ/:
- Հակակարկտային կայանքների բացակայությունը:
- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի և ՕԿՁ –ի քայքայվածությունը, պոմպակայանի ոչ լիաժերք հզորությունը, խմելու ջրի կորուստներն ու աղտոտումները.
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի քայքայվածությունը.
- Մշակույթի տան և մանկապարտեզի շենքերի քայքայված վիճակը.
- Թորքիային սահմանակից լինելը.
- Բնակչության ցածր կենսապայմանները.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները և համայնքում ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Համայնքի ռազմավարությունն է՝

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Գյուղատնտեսության ճյուղի և փոքր ու միջին բիզնեսի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

2.2. Հիմնական նպատակները

- Ոռոգման համակարգի վերանորոգում, ցանցի ընդլայնում:
- Արոտների ջրարբիացում:
- Խմելու ջրի մատակարարման բարելավում:
- Մշակույթի տան հիմնանորոգում:
- Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում:
- Բնակելի տների տանիքների վերանորոգում:
- Բնակավայր-մայրուղի 08.կմ ճանապարհի ասֆալտապատում:
- Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում:
- Դաշտամիջյան ճանապարհների փոսալցում:
- Կոյուղու ցանցի վերանորոգում:
- Գազամատակարարման սպառիչ ցանցի կառուցման ավարտում:
- Գյուղացիական տնտեսությունների կարողությունների զարգացում:
- Գյուղատնտեսական տեխնիկայի նորացում:
- Համայնքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում, նոր աշխատատեղերի ստեղծում:

- Քարի արտադրության և վերամշակման ճյուղի զարգացում, նոր աշխատատեղերի ստեղծում:
- Անհատական բնակարանային շինարարության խթանում:
- Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում:
- Համայնքում հանգստի գոտու հիմնում:
- Զբոսաշրջության զարգացում:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքհարկից և վարձակալության տրված համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարներից: Վերջին 10 տարիներին համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են 70-100 տոկոսով: Բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել են ընթացիկ աշխատավարձերի ու սոցիալական ապահովության պարտադիր վճարների վճարմանը, խմելու ջրի ներքին ցանցի և խորքային պոմպի վերանորոգման աշխատանքների կատարմանը, ոռոգման ցանցի մասնակի վերանորոգմանը, բնակավայր մտնող և միջհամայնքային ճանապարհների փոսային նորոգմանը, փոքրածավալ ծառայությունների մատուցմանը /աղբահանության կազմակերպում, փողոցների լուսավորության ցանցի վերականգնում, ցանցի սպասարկում և այլն/, սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնությունների տրամադրմանը, գազաբաշխիչ ցանցի կառուցման և այլ ծրագրերի իրականացման համար համայնքից պահանջված ներդրումների կատարմանը, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Համայնքի բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Այդ

հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մարմինների, հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային /համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ծախսային ծրագրերին, որի համար համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարումից ստացվող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆՆԱՏԵՍՈՒՄ

Հազ. դրամ

Հ/հ	Եկամուտի տեսակը	2016թ փաստացի կատարված	2017թ. նախատես ված	2018թ. կանխա- տեսում	2019թ. կանխա- տեսում	2020թ. կանխա- տեսում.
	Եկամուտներ, քնդիամենք	19332.2	19739,7			
Ա	Հարկային եկամուտներ					
1	Հողի հարկ	3078,0	3500,0			
2	Գույքահարկ	1915.0	1964.5			
3	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր	64,0	64,0			
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	64,0	64,0			
	Ոչ հարկային եկամուտներ					
1	Համայնքայի սեփ. հողերի վարձավճարներ	1415.8	1415.8			
2	Գույքի վարձավճարներ					
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Գ	Պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	12795.4	12795.4			
Դ	Եկամուտներ, կապիտալի գործառնություններից					
Ե	Տարեկգրի ազատ մնացորդ					
Զ	Ֆոնդային բյուջե					
	Բյուջեի կատարում/տոկոս/	102.4	98.0	100.0	100.0	100.0

3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տարածաշրջանին բնորոշ բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /կարկտահարություն, երաշտ, ցրտահարություն/, ոռոգման համակարգի քայքայվածության և ոռոգելի հողատարածքների պակասի, համայնքի բնակչության սոցիալական վատ պայմանների, ինչպես նաև համայնքից տևական ժամանակ բացակայող ընտանիքների կողմից հարկային պարտավորությունները չկատարելու հետևանքով, սեփական եկամուտների գծով համայնքում կուտակվել են շուրջ հազար դրամի ապառքներ, որից հողի հարկի գծով`.... հազար դրամ, գույքահարկի գծով` հազար դրամ և հողերի վարձակալական վճարների գծով` ... հազար դրամ: Ձեռնարկված միջոցառումների և <<Հողի հարկի և գույքահարկի արտոնություններ տրամադրելու մասին>> ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում վերջին 3 տարիների ընթացքում հնարավոր է եղել հավաքագրել մոտ հազար դրամ ապառքներ:

Հողի հարկի և գույքահարկի ապառքների 20 տոկոսը անհուսալի են և պատկանում են հողի այն սեփականատերերին, ովքեր շուրջ 10 և ավելի տարիներ ընտանիքով բացակայում են հանրապետությունից, իսկ նրանց հողերը կամ չեն մշակվում կամ առանց համապատասխան պայմանագրի ու պետական գրանցման օգտագործվում են հողի սեփականատերերի հարազատների ու մտերիմների կողմից: Գյուղապետարանը իրավական հիմքեր չունի նշված ապառքները դատական կարգով հողի փաստացի օգտագործողներից գանձելու համար, իսկ աշխատանքի բերումով արտերկրներում հայտնված համայնքի անդամներին հողի սեփականությունից զրկելը համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները հարցի լուծման իրատեսական տարբերակ չեն համարում:

01.01.2016թ. դրությամբ համայնքը աշխատավարձի, սոցիալական ապահովության վճարների գծով ապառքներ չունի:

3.4. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՎԱՐՉԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ. դրամ

Ապառքի տեսակը	Ապառքը առ. 01.01.16թ. դրությամբ	Ապառքների հավաքքման կանխատեսում				Անհուսալի ապառքներ
		2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	
Հողի հարկ	3078.0	3500,0				20%
Գույքահարկ	1915.0	1964.0				
Հողի	1346.0	1415.0				

3.6. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Դոնոր կազմակերպության ներդրում /հազ. դրամ/	Համայնքի ներդրում /հազ. դրամ/	Կատարման Ժամկետը /հազ. դրամ/
1.	<i>Ջրափիի համայնքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում</i>	2 500.0	0.0	2 500.0	2017-2018թ.
2.	<i>Ջրափիի համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում</i>	1850.0	0.0	1850.0	2018թ.
3.	<i>Աղբավայրերում աղբակույտերի ծածկումը հողով, շրջակա միջավայրի սանիտարական վիճակը չխախտելու համար</i>	500.0		500.0	2018թ.
4.	<i>Կանգառների կառուցում</i>	400.0		400.0	2017թ.
5.	<i>Վարչական շենքի հարակից տարածքի բարեկարգում և կառուցապատում</i>	1500.0		1500.0	2019թ.
6.	<i>Հանդիսությունների սրահի վերանորոգում</i>	5000.0		5000.0	2018թ.
7.	<i>Անասունների ջրելատեղի համար խողովակաշարի անցկացում</i>	300.0		300.0	2020թ.
8.	<i>Մեծահասակների խաղասենյակի վերանորոգում</i>	800.0		800.0	2019-2020թթ.
9.	<i>Ոռոգման ջրի ներքին ցանցի վերանորոգում</i>	10000.0	ԿԱՐԻՏԱՍ	1000.0	2016-2017թ.
10.	<i>Փողոցների համարակալում</i>	200.0		200.0	2017թ.
11.	<i>Ջրահեռացման ցանցի վերանորոգում</i>	3000.0	ԿԱՐԻՏԱՍ	300.0	2017թ.

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և նամայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Իսկ ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական հնարավորությունները, ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը:

2016- 2020թթ. նախատեսվում է իրականացնել առաջնահերթ լուծում պահանջող հետևյալ ծրագրերը՝

Ծրագիր 1

Փողոցների գիշերային լուսավորության անցկացում

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն (փողոցների լուսավորում)
(Ոլորտի անվանումը)

Ծրագրերի ընդհանուր արժեքը՝ 2500.0 հազար դրամ

Փողոցների գիշերային լուսավորության անցկացում

Ծրագրերի տեսակը կամ գնվող ապրանքը՝

Ընդլայնում

Ծրագրերի հիմնավորումը

Շուրջ 20 տարի է ինչ լիարժեք չի գործում համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցը: Համայնքի բյուջեի միջոցներով անցած 3 տարիների ընթացքում հնարավոր է եղել տեղադրել 20 լուսարձակ, որը բավարար չէ համայնքի բնակչության գիշերային ժամերի տեղաշարժի անվտանգությունն ապահովելու համար: Բնակավայրի

առանձին փողոցներում լուսարձակների բացակայության պատճառով խիստ դժվարացել է համայնքի բնակչության գիշերային ժամերի տեղաշարժը: Եղել են դեպքեր երբ համայնքի բնակիչները գիշերային ժամերին ենթարկվել է թափառող շների հարձակումներին:

Համայնքում փողոցների գիշերային լուսավորության ցանց կառուցված է միայն կենտրոնական փողոցում (5 լուսատու):

Օրագրերի նպատակները

1. Օրագրի նպատակն է գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման շնորհիվ ապահովել համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ տեղաշարժն ու երթևեկությունը *նպաստելով բնակչության անվտանգության և կենսամակարդակի բարձրացմանն ու զբոսաշրջության զարգացմանը:*

Օրագրերի խնդիրները

- Ուսումնասիրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման տեխնիկական հնարավորությունները և կազմել լուսարձակների տեղաբաշխման սխեմա:
- Պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- <<Հայաստանի էլեկտրացանցեր>> ընկերության հետ սահմանված կարգով կնքել պայմանագիր՝ լուսավորության ցանցի էլ սնուցման թույլտվություն և տեխնիկական պայմաններ ստանալու համար:
- Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարել մրցույթ և ընտրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցը կառուցող շինարարական կազմակերպությունը:
- Ըստ նախնական հաշվարկների բնակավայրի թիվ թվով **1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 9** փողոցներում տեղադրել թվով 45 լուսարձակներ:
- Ըստ ամենայնի աջակցել լուսավորության ցանցի կառուցման շինարարական աշխատանքներին:
- Ապահովել ցանցի շահագործումն ու անխափան աշխատանքը:
- Ցանցի շահագործման ու սպասակարման հետ կապված ծախսերն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

- ✓ **Նախապատրաստել փողոցների գիշերային լուսավորության ցանցի անցկացման նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերը**
- ✓ **Հայտարարել մրցույթ և ընտրել կապալառուին**

- ✓ Իրականացնել փողոցների գիշերային լուսավորության անցկացման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական հսկողություն և ընդունել փողոցների գիշերային լուսավորության անցկացման աշխատանքների ավարտական ակտը

Ծրագրերի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրերի իրականացման քայլերը / գործողությունները	2017թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Նախապատրաստել փողոցների գիշերային լուսավորության ցանցի անցկացման նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերը												
2	Հայտարարել մրցույթ և ընտրել կապալառուին												
3	Իրականացնել փողոցների գիշերային լուսավորության անցկացման աշխատանքները												

Հ/հ	Ծրագրերի իրականացման քայլերը / գործողությունները	2018թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
3	Իրականացնել փողոցների գիշերային լուսավորության անցկացման աշխատանքները												
4	Իրականացնել տեխնիկական հսկողություն և ընդունել փողոցների գիշերային լուսավորության անցկացման աշխատանքների ավարտական ակտը												

Ծրագրերի ակնկալվող արդյունքները

Ծրագրերի իրականացման արդյունքում համայնքում կունենանք փողոցների գիշերային լուսավորվածություն, ինչը կնպաստի բնակչության անվտանգության և կենսամակարդակի բարձրացմանը և խթան կհանդիսանա զբոսաշրջության զարգացման համար:

Գիշերային լուսավորության ցանցի կառուցմամբ կապահովվի համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ տեղաշարժն ու երթևեկությունը:

Ծրագրերի բյուջեն

ա/ ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները

Ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուր 2500.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

բ/ ծրագրերի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառական դասակարգման

Հ/հ	Ծրագրերի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)		1000.0				1000.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ						
Բ.	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ		1000.0				1000.0

6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ տնտեսություն		1000.0				1000.0
----	---	--	--------	--	--	--	--------

զ/ ծրագրերի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Ծրագրերի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					Ընդամենը
		2016	2017	2018	2019	2020	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝			1500.0			1500.0
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝						
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝			1500.0			1500.0
1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում՝			1500.0			1500.0
	Այլ հիմնական միջոցներ			1500.0			1500.0

Ծ Ր Ա Գ Ի Ր 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Ջրափիի համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ջրափիի համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի են հետիոտների, տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական տեծնիկայի համար:

ԾՐԱԳՐԻ ՆՊՍՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գույատնտեսական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ:

Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի փողոցները, գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար բեռնատարների և գյուղատնտեսական մեքենաների համար ապահովել անվտանգ երթևեկություն, կանխել վթարային իրավիճակները և բերքի հնարավոր կորուստները:

ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

1. Հանքակոպճի միջոցով փոսայցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա համայնքի առավել քայքայված և անանցանելի ներհամայնքային **1.0 կմ** ընդհանուր երկարության ճանապարհահատվածներ՝ **5000քառ.մ** ընդհանուր մակերեսով, այդ թվում՝
Փողոց թիվ 1 – 200զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 1000քառ.մ.
Փողոց թիվ 2 – 300զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 15000քառ.մ.
Փողոց թիվ 3 – 100զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.
Փողոց թիվ 4 – 200զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 1000քառ.մ.
Փողոց թիվ 5 – 100զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.
Փողոց թիվ 6 – 100զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.
Ընդամենը՝ 1000զծ. մ. մակերեսը՝ 5000քառ.մ.

2. Հանքակոպճի միջոցով փոսայցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա դաշտամիջյան ճանապարհների **1.5 կմ** ընդհանուր երկարություն տարբեր տեղամասեր՝ **6000 քառ.մ** ընդհանուր մակերեսով:

Այդ թվում՝

/Հայկաձորի տարածք/ կոչվող հանդամաս՝ 400զծ.մ. երկարություն, 1600քառ.մ. մակերեսով.
/Գերեզմաններ/ կոչվող հանդամաս՝ 200 զծ.մ. երկարություն, 800 քառ.մ. մակերեսով.
/Կայոեսներ/ կոչվող հանդամաս՝ 300 զծ.մ. երկարություն, 1200 քառ.մ. մակերեսով.
/Ղալարի/ կոչվող հանդամաս՝ 600 զծ.մ. երկարություն, 2400 քառ.մ. մակերեսով.
Ընդամենը՝ 1500 զծ. մ., մակերեսը՝ 6000 քառ. մ.:

Անհրաժեշտ է իրականացնել վերանորոգվող ներհամայնքային ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրման, շինարարական և կենցաղային աղբի տեղափոխման աշխատանքներ:

Սանիտարական մաքրման է ենթակա 20000 քառ. մ. տարածք: Ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 20 խ.մ. շինարարական և կենցաղայի աղբ:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրարի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և աշխատանքների իրականացման ժամանակացույց :

- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ճանապարհների նորոգման, շրջակայքերի սանիտարական մաքրման աշխատանքներին ներգրավել համայնքում առկա տրանսպորտային, տեխնիկական միջոցներն ու համայնքի բնակչությանը:

Ծրագրերի ակնկալվող արդյունքները

Ծրագրերի իրականացման արդյունքում համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերում կունենանք հարթ և բարեկարգ ճանապարհներ, ինչը կնպաստի բնակչության բարեկեցության բարձրացմանը և խթան կհանդիսանա զբոսաշրջության զարգացման համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հ/հ	Աշխատանքների նկարագրությունը, նյութերի անվանումը,	Չափի միավոր	Քանակը	Միավորի արժեքը /դրամ/	Ընդհանուր արժեքը /դրամ/	Նշումներ
Տեխնիկական միջոցների շահագործում						
1	Էքսկավատորի շահագործում /հարթեցման աշխատանքներ/	ժամ	200	2000	400000	
2	Բարձիչ մեխանիզմով բարձման ախատանքների իրականացում` -հանքակոպիճի բարձում` 150խ.մ. -ավազի բարձում` 110խ.մ. -շինարարական և կենցաղային աղբի բարձում` 20խ.մ.	Խոր.մ	250	1200	300000	
3	Ինքնաթափի միջոցով հանքակոպիճի, ավազի և աղբի տեղափոխում	Խոր.մ	250	1000	250000	
	Ընդամենը` Տեխնիկական միջոցների շահագործում	X	X	X	950000	
Աշխատանք						
1.	Ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրում	Քառ.մ	20000	X	X	Համայնքի անդամներ
	Ընդամենը աշխատանք	X	X	X	X	
Նյութեր						
1	Հանքակոպիճ	Խոր.մ	100	X	X	Համայնքի ներդրում

2	Ավագ	Խոր.մ	80	X	X	Համայնքի ներդրում
3	Դիզելային վառելանյութ	լիտր	2000	450	900000	
Ընդամենը նյութեր					900000	
Ընդամենը ծախսեր					1850000	

Ծրագրի իրականացման համար կպահանջվի 1850 հազ. դրամի ներդրում,

Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումն իրականացնել համայնքի բնակչության ուժերով:

Ծրագրերի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրերի իրականացման քայլերը / գործողությունները	2018թ., Ամիսներ												
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1	Համայնքի տարածքում (առանց բնությանը վնասելու) գտնել բավարարաչափ հողի և խեճի պաշարներ													
2	Աշխատանքներն իրականացնելու համար ձեռք բերել բավարարաչափ տրանսպորտային նյութեր (դիզ. վառելիք)													
3	Կազմակերպել հողի և խեճի տեղափոխման ու ճանապարհների հարթեցման աշխատանքները													

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

բ/ ծրագրերի ծախսերն ըստ ծախսերի գործառական դասակարգման

Հ/հ	Ծրագրերի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)			1850.0			1850.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆՔՅՈՒՋԵԻԾԱԽՍԵՐ			1850.0			1850.0
4.	Տնտեսական հարաբերություններ			1850.0			1850.0
Բ.	ՖՈՆԴԱՑԻՆԲՅՈՒՋԵԻԾԱԽՍԵՐ						

Ծրագիրն իրականացնել 2018 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Ջրափիի համայնքի ղեկավար՝ Կամո Սարգսյան:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Ջրափիի համայնքի ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմ, համայնքի բնակիչներ:

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՍՅԱ ԾՐԱԳՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

N	Ցուցանիշի անվանումը	Չափի միանոր	2016թ. փաստացի	2017թ. կանխատեսում	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում
1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	2581	2581			
2	Բնակչության թիվը	մարդ	1027	1147			
3	ՏՆ. տնտեսությունների թիվը	ընտ.	231	233			
4	Ծնունդը	մարդ	12				
5	Մահացությունը	մարդ	10				
6	Աշխատունակ բնակչություն	մարդ	803	817			
7	Զբաղվածները ընդամենը այդ թվում՝ ըստ տնտեսության ճյուղերի՝	մարդ	672	695			
	ա/ գյուղատնտեսություն /թերի բեռնվածությամբ/	մարդ	568	598			
	բ/արդյունաբերություն	մարդ	14	18			
	գ/շինարարություն	մարդ	15	20			
	դ/ ծառայությունների ոլորտ.	մարդ	10	9			
	դ/այլ ոլուտներ	մարդ	65	50			
8	Գործազրկության մակարդակը	%	50				
9	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	3				
10	Համայնքային սեփականության վարելահողեր	հա	832				
11	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	70				
12	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	4,5				
13	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	4,5				
14	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	200				
15	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	8				
16	Զբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	8				
17	Ընդամենը բնակ -ֆոնդ այդ թվում՝	հատ/ ք.մ	250/ 12000				
	-Համայնքային	հատ ք.մ	40/ 1920				
	-Մասնավոր բնակ. ֆոնդ	հատ ք.մ	210/ 10080				
18	Բնակարանի կարիքավոր ընտանիքերի թիվը	հատ					
19	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լիտր/ օր	5				
20	Ջրի կորուստները ցանցում	%	20				
21	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	92				

22	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	12				
23	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	9				

Ծրագիր 3

Աղբավայրերում աղբակույտերի ծածկում հողով՝ շրջակա միջավայրի սանիտարական վիճակը չխախտելու համար

Շրջակա միջավայրի պաշտպանություն
(Ոլորտի անվանումը)

Ծրագրերի ընդհանուր արժեքը՝ 500.0 հազար դրամ

Աղբավայրերում աղբակույտերի ծածկում հողով՝ շրջակա միջավայրի սանիտարական վիճակը չխախտելու համար՝ 500.0 հազար դրամ

Ծրագրերի տեսակը կամ գնվող ապրանքը՝

Ընթացիկ աշխատանքներ

Ծրագրերի հիմնավորումը

Ներկայումս համայնքում հավաքված կենցաղային աղբը տեղակայվում է բնակավայրերին հարակից ձորակներում, որն էլ պատճառում է բազմաթիվ տհաճություններ և հետագայում կարող է առաջացնել համաճարակներ: Ուստի անհրաժեշտ է, որպեսզի մինչ այժմ նշված վայրերում տեղակայված աղբը ծածկվի բուսական հողով, որն էլ հետագայում կվերածվի կանաչապատ տարածքի:

Ծրագրերի նպատակը

1. Պահպանել համայնքի բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից, ունենալով մաքուր շրջակա միջավայր՝ տարածաշրջանը դարձնել առավել հետաքրքիր զբոսաշրջիկների համար:

Ծրագրերի խնդիրները

- ✓ Համայնքի տարածքում (առանց բնությանը վնասելու) գտնել բավարարաչափ բուսական հողի պաշարներ
- ✓ Աշխատանքներն իրականացնելու համար ձեռք բերել բավարարաչափ տրանսպորտային նյութեր (դիզ. վառելիք)
- ✓ Կազմակերպել բուսական հողի տեղափոխման և աղբակույտերի ծածկման աշխատանքները

Ծրագրերի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրերի իրականացման քայլերը / գործողությունները	2018թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Համայնքի տարածքում (առանց բնությանը վնասելու) գտնել բավարարաչափ բուսական հողի պաշարներ												
2	Աշխատանքներն իրականացնելու համար ձեռք բերել բավարարաչափ տրանսպորտային նյութեր (դիզ. վառելիք)												
3	Կազմակերպել բուսական հողի տեղափոխման և աղբակույտերի ծածկման աշխատանքները												

Ծրագրերի ակնկալվող արդյունքները

Ծրագրերի իրականացման արդյունքում կունենանք մաքուր և բարեկեցիկ շրջակա միջավայր, հնարավորություն կստեղծվի խուսափել հիվանդություններից և համաճարակներից: Մաքուր շրջակա միջավայր ունենալով տարածաշրջանը կդառնա առավել հետաքրքիր զբոսաշրջիկների համար:

Կապը այլ ծրագրերի հետ

Այս ծրագրերը կապված են ՀԶՀԾ-ի 3-րդ բաժնում նշված՝ «Ջրափի համայնքի ներբնակավայրային ու միջբնակավայրային ճանապարհների սպասարկման, կանոնավոր աղբահանության, գյուղտեխնիկայի վերազինման և ՀՈԱԿ-ի ստեղծման» ծրագրի 1-ին բաղադրիչի հետ, քանի որ ձեռք բերված տեխնիկայի (էքսկավատոր, գոնյդել և կամազ) միջոցով հնարավոր կլինի կազմակերպել բուսական հողի տեղափոխման և աղբակույտերի ծածկման աշխատանքները:

Նշված ծրագրերը կապված են նաև ՀԶՀԾ-ի 3-րդ բաժնում նշված՝ «Ջրափի համայնքի ներբնակավայրային ու միջբնակավայրային ճանապարհների սպասարկման, կանոնավոր աղբահանության, գյուղտեխնիկայի վերազինման և ՀՈԱԿ-ի ստեղծման» ծրագրի 2-րդ բաղադրիչի հետ, քանի որ բնակավայրերում կենտրոնացված աղբահանության շնորհիվ ծածկված աղբակույտերը կծառայեն իրենց նպատակին (կկանաչապատվեն):

Ծրագրերի բյուջեն

ա/ ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները

Ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուր 500.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

բ/ ծրագրերի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման

Հ/հ	Ծրագրերի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)			500.0			500.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ			500.0			500.0
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն			500.0			500.0
Բ.	ՖՈՆԴԱՑԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ						

գ/ ծրագրերի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Ծրագրերի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝			500.0			500.0
Ա.	ԸՆԹԱՅԻՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝			500.0			500.0
1.2	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում, որից			500.0			500.0
	- Այլ տրանսպորտային ծախսեր			200.0			200.0
	- Տրանսպորտային նյութեր			300.0			300.0
Բ.	ՈՉՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ						

Ծրագիր 4

Կանգառների կառուցում

Հանգիստ, մշակույթ և կրոն

(Ոլորտի անվանումը)

Ծրագրերի ընդհանուր արժեքը՝ 400.0 հազար դրամ

Ծրագիր 15. Կանգառների կառուցում 400.0 հազար դրամ

Ծրագրերի տեսակը կամ գնվող ապրանքը՝

Երբ

Ծրագրերի հիմնավորումը

Ջրափի համայնքի հանրային շփման վայրերում և խաչմերուկներում տեղադրված չեն և բացակայում են բազմաֆունկցիոնալ կանգառներ, որի պատճառով կա նաև ինֆորմացիայի պակաս համայնք այցելող զբոսաշրջիկների համար:

Ծրագրերի նպատակները

1. Ունենալ բազմաֆունկցիոնալ կանգառներ՝ խթանելով զբոսաշրջության զարգացմանը համայնքում:

Ջրափի համայնքում տեղադրել թվով 2 բազմաֆունկցիոնալ կանգառներ:

Ծրագրերի խնդիրները

- ✓ Հայտարարել մրցույթներ և ստեղծել համապատասխան կանգառներ կառուցող կազմակերպություններ
- ✓ Իրականացնել կանգառների կառուցման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և հաստատել կանգառների կառուցման աշխատանքների կատարման ավարտական ակտը

Ծրագրերի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրերի իրականացման քայլերը / գործողությունները	2017թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Հայտարարել մրցույթներ և ստեղծել համապատասխան կանգառներ կառուցող կազմակերպությանը												
2.	Իրականացնել կանգառների կառուցման աշխատանքները												
3	Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և հաստատել կանգառների կառուցման աշխատանքների կատարման ավարտական ակտը												

Ծրագրերի ակնկալվող արդյունքները

Քանի որ տարածաշրջանը համարվում է զբոսաշրջային կենտրոն, ուստի Խոտ և Տաթև բնակավայրերում կանգառների առկայությունը հնարավորություն կտա տարածաշրջան այցելող հյուրերին կանգառներում տեղադրված ինֆորմացիոն շիթերի, քարտեզների և այլնի միջոցով ուղղորդել տեսարժան վայրեր ու հանրային ծառայություններ մատուցող օբյեկտներ: Կանգառների առկայությունը հնարավոր կդարձնի բնակիչ-զբոսաշրջիկ շփումը, որն էլ հետագայում կունենա իր դրական արդյունքները՝ լեզվի իմացության փոխանակում, նոր ծրագրերի ու ներդրումների հնարավորություններ, համատեղ նախաձեռնությունների պլանավորում և իրագործում:

Հետագայում միջհամայնքային տրանսպորտ ունենալու դեպքում կունանեանք պատրաստի ենթակառուցվածք:

Ծրագրերի բյուջեն

ա/ ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները

Ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 400.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

բ/ ծրագրերի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման

Հ/հ	Ծրագրերի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					Ընդամենը
		2016	2017	2018	2019	2020	
	ԸՆԴԱՍԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)		400.0				400.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՐԻ ԾԱԽՍԵՐ						
Բ.	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՐԻ ԾԱԽՍԵՐ		400.0				400.0
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն		400.0				400.0

Ծրագիր 5

Վարչական շենքի հարակից տարածքի բարեկարգում և կառուցապատում

Հանգիստ, մշակույթ և կրոն

(Ոլորտի անվանումը)

Ծրագրերի ընդհանուր արժեքը՝ 1500.0 հազար դրամ

Ծրագիր 09. Վարչական շենքի հարակից տարածքի բարեկարգում և կառուցապատում 1500.0 հազար դրամ

Ծրագրերի տեսակը կամ գնվող ապրանքը՝

Ընթացիկ աշխատանքներ Վերանորոգում Նորը

Ծրագրերի հիմնավորումը

Վարչական շենքի հարակից տարածքը և ջրավազանը ունեն մաքրման, բարեկարգման և կառուցապատման կարիք, կառուցել հուշաղբյուր:

Ծրագրերի նպատակները

1. *Ունենալ բարեկարգ զբոսայգիներ՝ միաժամանակ ավելի տպավորիչ դարձնելով նաև համայնքի վարչական շենքերը:*

Նախատեսվում է բարեկարգել համայնքի վարչական շենքերի շրջակայքում գտնվող զբոսայգիները՝ իրականացնելով եղած ծառերի անհրաժեշտ էտում, կառուցելով բանուկոտքի անցուղիներ, տեղադրելով նստարաններ, տնկելով դեկորատիվ տնկիներ, ավելացնելով բացակայող ցանկապատերը և նորոգելով եղած ցանկապատերը:

Ծրագրերի խնդիրները

- ✓ Հաշվարկել վարչական շենքերի շրջակայքում գտնվող զբոսայգու համար անհրաժեշտ նյութերի քանակներն ու ծավալները
- ✓ Հայտարարել մրցույթ՝ ընտրել մատակարարին և ձեռք բերել համապատասխան նյութերը
- ✓ Իրականացնել վարչական շենքերի շրջակայքում գտնվող զբոսայգիների վերանորոգման աշխատանքները

Ծրագրերի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրերի իրականացման քայլերը / գործողությունները	2019թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Հաշվարկել վարչական շենքերի շրջակայքում գտնվող զբոսայգիների համար անհրաժեշտ նյութերի քանակներն ու ծավալները												
2	Հայտարարել մրցույթ՝ ընտրել մատակարարին և ձեռք բերել համապատասխան նյութերը												
3	Իրականացնել վարչական շենքերի շրջակայքում գտնվող զբոսայգիների վերանորոգման աշխատանքները												

Ծրագրերի ակնկալվող արդյունքները

Վարչական շենքերի հարակից տարածքների բարեկարգման և կառուցապատման ծրագրերի իրագործման արդյունքում կունենանք բարեկարգված ենթակառուցվածքներ, և բնակչության ու շահադրության սևեռման ավելացում դեպի հուշակոթողները ու դրանց պահպանումը: Բարեկարգված զբոսայգիները հնարավորություն կտան երիտասարդներին այնտեղ կազմակերպելու իրենց հանդիպումներն ու ժամանցը:

Ծրագրերի բյուջեն

ա/ ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները

Վարչական շենքերի հարակից տարածքների բարեկարգում և կառուցապատում ծրագրերի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 1500.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

բ/ ծրագրերի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման

Հ/հ	Ծրագրերի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)				1500.0		1500.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ				1500.0		1500.0
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն				1500.0		1500.0
Բ.	ՖՈՆԴԱՑԻՆԲՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ						

Ծրագիր 6
Հանդիսությունների սրահի վերանորոգում
 (Ծրագրի անվանումը)

Հանգիստ, մշակույթ
 (Ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 5000.0 հազար դրամ
 Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

☐Վերանորոգում

Ծրագրի հիմնավորումը

Համայնքի հանդիսությունների սրահը գտնվում է անմխիթար վիճակում: Դա միջոցառումների և արարողությունների ժամանակ անհարմարություններ է առաջացնում բնակչության և հյուրերի համար: Որպես մեծ հավաքույթների օջախ, նշված կառույցը միակն է ուստի խիստ անհրաժեշտություն կա այն վերանորոգելու և պահպանելու:

Ծրագրի նպատակները

1. Ստեղծել համայնքում հանդիսություններ կազմակերպելու բավարար պայմաններ:

Ծրագրի խնդիրները

- ✓ Նախապատրաստել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- ✓ Հայտարարել մրցույթ և ընտրել կապալառուին
- ✓ Իրականացնել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2018թ., Ամիսներ												
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1.	Նախապատրաստել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը													
2.	Հայտարարել մրցույթ և ընտրել կապալառուին													
3	Իրականացնել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքները													

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Հանդիսությունների սրահի վերանորոգման արդյունքում կունենանք վերանորոգված են թակառուցվածք: Հանդիսությունների սրահի վերանորոգումը թույլ կտա

հարսանանիքներն ու այլ միջոցառումները կազմակերպել ավելի բարձրակարգակով, և մարդիկ ստիպված չեն լինի ավելի շատ ծախսեր կատարելով՝ իրենց միջոցառումները տեղափոխել այլ բնակավայրեր կամ համայնքներ:

Վապը այլ ծրագրերի հետ

Այս ծրագիրը կապված է ՀԶՃԾ-ի 3-րդ բաժնում նշված՝ «Ջրափի գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի հետ, քանի որ վերանորոգված հանդիսությունների սրահին անհրաժեշտ կլինի մշտական ջրամատակարարում:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Հանդիսությունների սրահի վերանորոգման ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 5000.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնականության կարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					Ընդամենը
		2016	2017	2018	2019	2020	
	ԸՆԴԱՍՄԵՆԸ ՕՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)			5000.0			5000.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆՔՑՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ						
Բ.	ՖՈՆԴԱՅԻՆ ՔՑՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ			5000.0			5000.0
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն			5000.0			5000.0

Ծրագիր 7

Անասունների ջրելատեղիների համար խողովակաշարի անցկացում
(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն)
(Ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 300.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

Երկր

Ծրագրի հիմնավորումը

Անասունների ջրելատեղիների խողովակաշարի մասնակի բացակայության պատճառով հեռագնա արոտներում անասունների մի մասը մնում է ծարավ:

Ծրագրի նպատակները

1. Անասունների համար ապահովել անհրաժեշտ ջրաքանակ՝ նպաստելով նրանց մթերատվության բարձրացմանը:

Նախատեսվում է կառուցել նոր խողովակաշար:

Ծրագրի խնդիրները

- ✓ Կատարել ուսումնասիրություն և հաշվել անհրաժեշտ նյութերի չափերը
- ✓ Գնահարցման միջոցով ձեռք բերել անհրաժեշտ խողովակաշարը

✓ Իրականացնել խողովակաշարի կառուցման աշխատանքները

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2020թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Կատարելու ստանափրություն հաշվեկան հրաժեշտ նյութերի չափերը												
2	Գնահարցման միջոցով ձեռք բերել անհրաժեշտ խողովակաշարը												
3	Իրականացնել խողովակաշարի կառուցման աշխատանքները												

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Նոր խողովակաշարի կառուցման արդյունքում համայնքի անասունները կապահովվեն անհրաժեշտ ջրաքանակով, ինչը հնարավորություն կտա բարձրացնել նրանց մթերատվությունը:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Անասունների ջրելատեղիների համար խողովակաշարի անցկացում ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 300.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնականացման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)					300.0	300.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ					50.0	50.0
4.	Տնտեսական հարաբերություններ					50.0	50.0
Բ.	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ					200.0	200.0
4.	Տնտեսական հարաբերություններ					200.0	200.0

գ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտականացման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝					300.0	300.0
Ա.	ԸՆԹԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝					50.0	50.0
1.1	Աշխատանքի վարձատրություն, որից					50.0	50.0
	- Աշխատավարձեր և հավելավճարներ					50.0	50.0
Բ.	ՈՉՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՏՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝					200.0	200.0
1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում՝					200.0	200.0
	Այլ հիմնական միջոցներ					200.0	200.0

Ծրագիր 8

Մեծահասակների խաղասենյակի վերանորոգում

(Ծրագրի անվանումը)

Հանգիստ, մշակույթնկրոն
(Ուրտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 800.0 հազար դրամ
Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

Վերանորոգում Նորը

Ծրագրի հիմնավորումը

Համայնքի բնակչությունը չունի առօրյա հոգսերից և գործերից կտրվելու, ազատ ժամերին հանգստանալու համար նախատեսված վայր:

Ծրագրի նպատակները

1. Հնարավորություն ստեծել համայնքի բնակչության հանգիստը հաճելի կազմակերպելու համար:

Նախատեսվում է վերանորոգել մեծահասակների խաղասենյակի տարածքը և համալրել համապատասխան գույքով (նարդի, շախմատնայլն):

Ծրագրի խնդիրները

- ✓ Նախապատրաստել խաղասենյակի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը և հաշվարկել անհրաժեշտ գույքի չափերը
- ✓ Հայտարարել մրցույթ՝ ընտրել կապալառուին
- ✓ Գնահարցման միջոցով ձեռք բերել անհրաժեշտ գույքը
- ✓ Իրականացնել խաղասենյակի վերանորոգման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել խաղասենյակի վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը և տեղադրել ձեռք բերված գույքը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2019թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Նախապատրաստել խաղասենյակի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը և հաշվարկել անհրաժեշտ գույքի չափերը												
2	Հայտարարել մրցույթ՝ ընտրել կապալառուին												
3	Իրականացնել խաղասենյակի վերանորոգման աշխատանքները												

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2020թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Իրականացնել խաղասենյակի վերանորոգման աշխատանքները												
2	Գնահարցման միջոցով ձեռք բերել անհրաժեշտ գույքը												

3	Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել խաղասենյակի վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը և տեղադրել ձեռք բերված գույքը																			
---	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Համայնքի մեծահասակների խաղասենյակի վերանորոգման արդյունքում կունենանք մեծահասակների հաճելի հանգիստը կազմակերպելու հնարավորություն:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Մեծահասակների խաղասենյակի վերանորոգման ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը **800.0** հազար դրամ, ֆինանսավորվելու է համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՐ ԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)				400.0		400.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ						
Բ.	ՖՈՆԴԱՑԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ				400.0		400.0
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն				400.0		400.0

գ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՐ ԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝					400.0	400.0
Ա.	ԸՆԹԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ						
Բ.	ՈՉՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝					400.0	400.0
1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում՝					400.0	400.0
	Շենքեր և շինություններ, որից						
	- Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում						
	Մեքենաներ և սարքավորումներ, որից						
	-Այլ հիմնական միջոցներ						

Ծրագիր 9

Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն)

(Ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ **10000.0** հազար դրամ

Ծրագրի խնդիրները

Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1980-ական թվականներին և ունի 96.2 կմ ընդհանուր երկարություն: Այն նախատեսված է եղել 180 հա վարողահողերի ոռոգման

համար: Ցանցի քայքայվածության պատճառով դաշտերի ոռոգում չի իրականացվում և գործում է միայն գյուղամիջյան տնամերձ հողամասերի մոտ 45 հա ոռոգման ցանցը:

Ուսումնասիրել առկա ոռոգման համակարգի տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները և ցանցի ընդլայնման հնարավորությունները, կազմել թերությունների ակտ և պատվիրել նախագծա-նախահաշվային պաստատիթեր:

- ✓ Նախապատրաստել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- ✓ Հայտարարել մրցույթ, ընտրել կապալառուին
- ✓ Իրականացնել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքների կատարման ավարտական ակտը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2016թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Նախապատրաստել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը												
2	Հայտարարել մրցույթ, ընտրել կապալառուին												
3	Իրականացնել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքները												

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2018թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Իրականացնել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքները												
2	Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքների կատարման ավարտական ակտը												

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ոռոգման համակարգի վերանորոգման և ցանցի ընդլայնման միջոցով ոռոգելի դարձնել համայնքի շուրջ 50 հա տնամերձ: Բարձրացնել դաշտավարության արդյունավետությունը:

Համայնքի ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման ծրագրի իրականացման արդյունքում կունենանք տնամերձ տարածքները կենտրոնացված համակարգով ոռոգելու հնարավորություն:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 10000.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են ԿԱՐԻՏԱՍ-ի և համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					Ընդամենը
		2016	2017	2018	2019	2020	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)		10000.0				10000.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ						
Բ.	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ		10000.0				10000.0
4.	Տնտեսական հարաբերություններ		10000.0				10000.0

Ծրագիր 10

Փողոցների և տների համարակալում

(Ծրագրի անվանումը)

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն (բնակարանային

շինարարություն)

(Ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 200.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

Այլ

Ծրագրի հիմնավորումը

Համայնքի փողոցներն ու տները չունեն համարակալում և համապատասխան հասցեների ցուցիչներ: Քանի որ բնակավայրը համարվում է տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման կարևոր կետերից մեկը, ուստի անհրաժեշտություն է առաջանում փողոցներն ու տները համարակալել համապատասխան ցուցիչներով: Շատ անգամներ զբոսաշրջիկներն ու հյուրերը գովազդային վահանակների վրա կարդում են հյուրատան կամ հասարակական սպասարկում իրականացնող որևէ օբյեկտի հասցե, սակայն բնակավայր այցելելուց դժվարանում են գտնել տվյալ հասցեն:

Ծրագրի նպատակները

1. այցելուների համար դարձնել առավել գրավիչ և հարմարավետ:

Նախատեսվում է փողոցների սկզբնամասերում, խաչմերուկներում և տների մուտքերի մոտ փակցնել փայտից կամ օրգանական ապակուց պատրաստված ցուցանակներ:

Ծրագրի խնդիրները

- ✓ Կատարել ուսումնասիրություն, պատրաստել էսքիզներ և նախապատրաստել փողոցների և տների համարակալման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- ✓ Հայտարարել մրցույթ, ընտրել համապատասխան ցուցանակները պատրաստող կազմակերպությանը

- ✓ Իրականացնել փողոցների և տների համարակալման աշխատանքները (տեղադրել ցուցանակները)
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել փողոցների և տների համարակալման աշխատանքների կատարման ավարտական ակտը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2017թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Կատարել ուսումնասիրություն, պատրաստել էքսիզներ և նախապատրաստել փողոցների և տների համարակալման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը												
2	Հայտարարել մրցույթ, ընտրել համապատասխան ցուցանակները պատրաստող կազմակերպությանը												
3	Իրականացնել փողոցների և տների համարակալման աշխատանքները (տեղադրել ցուցանակները)												
4	Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել փողոցների և տների համարակալման աշխատանքների կատարման ավարտական ակտը												

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Փողոցների և տների համարակալման արդյունքում բնակավայրը կունենա ժամանակակից չափորոշիչների համապատասխան հասցեավորման ցուցիչներ:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Փողոցների և տների համարակալման ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 200.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՍԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)		200.0				200.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ						
Բ.	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ		200.0				200.0
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ տնտեսություն		200.0				200.0

Ծրագիր 11
Ջրահեռացման ցանցի վերանորոգում
 (Ծրագրի անվանումը)

Շրջակա միջավայրի պաշտպանություն
(Ոլորտի անվանումը)

Ջրափի համայնքապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 3000.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

☐ Կերանոքոցում

Ծրագրի հիմնավորումը

Համայնքի ջրահեռացման ցանցի մասնակի հատվածներ վերանորոգման կարիք ունեն: Ցանցի հին լինելու պատճառով ժամանակ առ ժամանակ լինում են վթարներ, ինչն էլ խախտում է շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը: Վթարների ժամանակ վնասվում են ներհամայնքային ճանապարհները:

Ծրագրի նպատակները

1. Բարձրացնել շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը՝ բարելավելով ջրահեռացման ցանցի վիճակը:

Նախատեսվում է վերանորոգել համայնքի ջրահեռացման ցանցի մոտ 1000 զմհատվածը:

Ծրագրի խնդիրները

- ✓ Նախապատրաստել ջրահեռացման ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը
- ✓ Հայտարարել մրցույթ, ընտրել կապալառուին
- ✓ Իրականացնել ջրահեռացման ցանցի վերանորոգման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել ջրահեռացման ցանցի վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2017թ., Ամիսներ												
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1	Նախապատրաստել ջրահեռացման ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը													
2	Հայտարարել մրցույթ, ընտրել կապալառուին													
3	Իրականացնել ջրահեռացման ցանցի վերանորոգման աշխատանքները													

4	Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել ջրահեռացման ցանցի վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը																	
---	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Համայնքի ջրահեռացման ցանցի վերանորոգման արդյունքում կունենանք՝ առանց սանիտարահիգիենիկ վիճակը խախտելու բնակչությանը որակյալ ծառայություն մատուցող ենթակառուցվածք, որով էլ հնարավոր կլինի բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Ջրահեռացման ցանցի վերանորոգման ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 3000.0 հազար դրամ, ֆինանսավորվելու է համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

բ/ ծրագրի ծախսերն ըստ ծախսերի գործառնական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)		3000.0				3000.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ						
Բ.	ՖՈՆԴԱՑԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ		3000.0				3000.0
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն		3000.0				3000.0

գ/ ծրագրի ծախսերն ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2016	2017	2018	2019	2020	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝		3000.0				3000.0
Ա.	ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ						
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝		3000.0				3000.0
1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում		3000.0				3000.0
	Այլ հիմնական միջոցներ		3000.0				3000.0